ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2024 թվականի մայիսի 21-ից 25-ը
Հունգարիա (ք. Բուդապեշտ) գործուղման արդյունքների մասին

1. Անունը, ազգանունը, զբաղեցրած պաշտոնը

Գալուստ Գալստյան, ՀՀ ՊԵԿ ՏՏ վարչության ցանցային ենթակառուցվածքների և սարքավորումների սպասարկման բաժնի պետ

2. Գործուղման վայրը և ժամկետները՝

Հունգարիա, ք. Բուդապեշտ, մայիսի 21-ից 25-ը

3. Հրավիրող կողմը՝

Հարկային մարմինների ներեվրոպական կազմակերպություն (IOTA)

4. Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը)՝

Հայաստանի Հանրապետությունում օտարերկրյա հարկային ռեզիդենտների ֆինանսական հաշիվների մասին տեղեկությունների հավաքագրման Ստանդարտը ներդնելու (Common Reporting Standard – CRS; այսուհետ՝ Ստանդարտ)՝ ՀՀ կառավարության 2019 թվականի դեկտեմբերի 12-ի №1830-Լ որոշմամբ հաստատված հավելված 2-ի 2.2.10-րդ կետով նախատեսվում է առաջիկա տարիներին կազմակերպել, ձևավորել ՀՀ հաշվետու ֆինանսական հաստատություններում օտարերկրյա ռեզիդենտների ֆինանսական հաշիվների վերաբերյալ տեղեկությունների հավաքագրման, ավտոմատացված հաղորդման և օտարերկրյա իրավասու մարմինների հետ փոխանակման, ինչպես նաև ՀՀ ռեզիդենտների կողմից օտարերկրյա պետությունների ֆինանսական հաստատություններում ունեցած հաշիվների վերաբերյալ օտարերկրյա իրավասու մարմիններից ստացվող տեղեկությունների օգտագործման համակարգ:

5. Քննարկված թեմաները՝

Քննարկված թեմաներն են՝

- Նախապատմություն և համատեքստ. AEOI Վարչական համապատասխանության ռազմավարություն:
- Մոդելային ձեռնարկ CRS-ի համապատասխանության աուդիտի համար:
- Փորձի փոխանակում մասնակիցների կողմից
- Նմանատիպ դեպքերի խմբային ուսումնասիրություններ
- Խմբային քննարկումներ ուսումնասիրությունների վերաբերյալ
- Կայուն կարողությունների ձևավորում

6. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը՝

Մասնակցել են Ալբանիայի, Ավստրիայի, Ադրբեջանի, Բելգյաի, Բուլղարիայի, Դանիայի, Էստոնիայի, Ֆինլանդիայի, Հունաստանի, Կիպրոսի, Հունգարիայի, Իսլանդիայի, Լատվիայի, Լիտվիայի, Մալտայի, Լեհաստանի, Պորտուգալիայի, Ռումինիայի, Սլովակիայի, Միացիալ Թագավորությունների, Իսպանիայի պատվիրակները:

Քննարկվել են AEOI պորտալի կիրառման վերաբերյալ միշարք հարցեր, դիտարկվել են «tax administration» -ի սկզբունքային թեմաները:

7. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը՝

Համաժողովի ընթացքում ձեռք է բերվել պայմանավորվածություն նմանատիպ աշխատանքային քննարկումներ կազմակերպելու անհրաժեշտության վերաբերյալ:

8. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները՝

Երկրների պատվիրակների միջև համաժողովի ժամանակ ձեռք են բերվել պայմանավորվածություններ հետագա համագործակցության և փորձի փոխանակման վերաբերյալ:

9. Ստորագրությունը, ամսաթիվը

Գալուստ Գալստյան 29.05.2024